ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Լևոն Ալթունյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, 15-17 նոյեմբերի 2017 թ.

4. Հրավիրող կողմը

Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն,

Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարություն

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն «Տուբերկուլոզի վերացումը կայուն զարգացման դարաշրջանում» խորագրով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության առաջին գլոբալ նախարարական համաժողովին

6. Քննարկված թեմաները

Համաժողովի ընթացքում քննարկվեցին ՄԱԿ-ի Կայուն Զարգացման նպատակներին հասնելու առավել արագ ուղիները, մասնավորապես՝ մինչև 2030 թվականը տուբերկուլոզի գլոբալ համաճարակը կանխելու նպատակով ԱՀԿ՝ տուբերկուլոզի դեմ պայքարի ռազմավարության ներդրման գործընթացները:

Հատուկ շեշտ դրվեց միջոլորտային համագործակցության սերտացման, գլոբալ մարտահրավերների և վտանգների ծագման դեպքում միջոցառումների համատեղ պլանավորման, գիտահետազոտական համագործակցության զարգացման վրա: Տուբերկուլոզի վերացմանը հասնելու համար անհրաժեշտ է նման հետևողական և համակարգված մոտեցում:

Միջոցառումը նշանավոր էր նրանով, որ իր հարկի տակ էր հավաքել ԱՀԿ անդամ-երկրների առողջապահության և այլ շահագրգիռ մարմինների (ֆինանսների, սոցիալական ապահովության, արդարադատության) նախարարներին և պատվիրակություններին, ՄԱԿ-ի առողջապահական կառույցների և այլ միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան ղեկավարներին և ներկայացուցիչներին, տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրերի ղեկավարներին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության, ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներին և այլ շահագրգիռ կողմերին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջոցառման բացմանը ներկա էին և ելույթի խոսքով հանդես եկան Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինը, Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարար Վերոնիկա Սկվորցովան, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ամինա Մոհամմեդը, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության գլխավոր տնօրեն Տեդրոս Ադհանոմ Գեբրեյեսուսը, ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Ժուժանա Յակաբը:

Միջոցառման շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության գլխավոր տնօրեն Տեդրոս Ադհանոմ Գեբրեյեսուսի, ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Ժուժանա Յակաբի, UNAIDS-ի գործադիր տնօրեն Միշել Սիդիբեի, ինչպես նաև Բելառուսի և Ճապոնիայի առողջապահության նախարարների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկրների փորձը տուբերկուլոզի դեմ պայքարի ոլորտում, ձեռքբերումները և նոր մարտահրավերներին երկրների պատրաստվածությունը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների օժանդակող դերը այդ գործում: Բացի վերը նշվածից, քննարկվել են նաև առողջապահոթյան բնագավառի մի շարք ուղղություններով համագործակցության հարցեր, մասնավորապես՝ ծխախոտի դեմ պայքարի, բժշկական ապահովագրության, էլեկտրոնային առողջապահության

ներդրման հետ կապված կարևորագույն հարցեր և դրանց շուրջ համագործակցության հեռանկարները:

ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Ժուժաննա Յակաբի կողմից նշվեց ոչ միայն տուբերկուլոզի, այլ նաև մի շարք վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ոլորտում Հայաստանի հաջողված փորձը, որը հետաքրքրություն առաջացրեց օտարերկրյա պետությունների գործընկերների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում:

Հանդիպումների ընթացքում առիթ ունեցա նաև ՀՀ առողջապահության նախարարության անունից 2018 թվականի ընթացքում Հայաստան հրավիրելու Ճապոնիայի առողջապահության նախարարին, ԱՀԿ գլխավոր տնօրենին, Եվրոպական տարածաշրջանային գրասենյակի տնօրենին, ինչպես նաև UNAIDS-ի գործադիր տնօրենին: Վերջիններիս հետ ուրվագծվեցին առաջիկա հնարավոր այցի օրակարգային հարցերը:

Համաժողովի երկրորդ օրը մասնակցել եմ «Կայուն և բավարար ֆինանսավորում» խորագրով նախարարական պանելային նիստին: Նիստը վարում էր Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության եվրոպական գրասենյակի առողջապահական համակարգերի և հանրային առողջության բաժնի տնօրեն Հանս Կլյուգեն, մասնակցում էին նաև Մեծ Բրիտանիայի պառլամենտի անդամ Նիկ Հերբերտը, Ճապոնիայի առողջապահության, աշխատանքի և բարեկեցության պետական նախարար Միչիո Տակադին, Ինդոնեզիայի առողջապահության նախարար Նիլա Մոելոեկը, Բելառուսի ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Մաքսիմ Երմալուկիչը, Հնդկաստանի ազգային առողջության առաքելության կառավարման տնօրեն Մանոյ Ջհալանին, «Գլոբալ» հիմնադրամի գործընկերության ղեկավար Պիտեր Հանսենը, Գերմանիայի Դաշնության տնտեսական համագործակցության և զարգացման ֆեդերալ նախարարության ներկայացուցիչ Հեյկո Վորնքենը:

Պատասխանելով համաժողովի մասնակիցների կողմից ուղղված հարցին՝ ներկայացրել եմ իրականացվող աշխատանքների արդյունքում վերջին տարիներին Հայաստանում արձանագրված տուբերկուլոզի համաճարակաբանական հիմնական բարելավված ցուցանիշները, նշել եմ, որ միջազգային կառույցների աջակցությամբ

Հայաստանում հաջողությամբ շարունակաբար ներդրվում են բժշկական օգնության նոր մոդելներ: Ընդ որում, հիմնական ուղղվածությունը դեպի առողջության պահպանման առաջնային օղակն է:

Խոսելով տուբերկուլոզի հաղթահարման գործում հիվանդության ախտորոշման, բուժման և կանխարգելման նոր մոտեցումների ներդրման մասին՝ կարևորել եմ Կայուն զարգացման նպատակներին, մասնավորապես՝ մինչև 2030 թվականը տուբերկուլոզի հաղթահարմանը հասնելու գործում տարբեր երկրների ջանքերի համատեղումը: Ելույթիս ժամանակ առանձնացվեց նաև մեր երկրում հիվանդացության հիմնական ռիսկերից մեկը հանդիսացող տուբերկուլոզով հիվանդ միգրանտների հսկողության համատեղ ծրագրերի իրականացման հարցը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի ընթացքում ստորագրվեց նախարարական հայտարարություն, որտեղ ամրագրված են Կայուն զարգացման նպատակներին հասնելու և տուբերկուլոզի վերացման նպատակով ԱՀԿ անդամ-երկրների գործունեության հիմնական ուղղությունները: Նախարարական հայտարարությունը կհրապարակվի 2018 թվականին կայանալիք ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ տուբերկուլոզին նվիրված բարձրաստիճան հանդիպման ժամանակ:

9. Գործուղվողները

Լևոն Ալթունյան

Ալեքսանդր Բազարչյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

21.11.2017 թ.